ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԷՄԻՆՅԱՆ ԳԱԳԻԿ ԿԱՌԼԵՆԻ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱՆԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Պարգև Հովհաննեսի Գևորգյան

Պաշտոնական ընդդիմադիրներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աիդա Օնիկի Թոփուզյան
մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սպարտակ Սերյոժայի Սողոյան

Առաջատար կազմակերպություն՝ **Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. դեկտեմբերի 16-ին ժամը 12:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021թ. հոկտեմբերի 25-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական
խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝  **Թերեզա Յուրիի Ազատյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Մարդկության սկզբնավորման ժամանակներից բանական մարդը որոնել է միջոցներ՝ սովորածը վերարտադրելու, ձեռք բերած գիտելիքները հարստացնելու և սերունդներին փոխանցելու համար: Առաջին պետական միավորումների ի հայտ գալուց առաջ արդեն պատմությանը հայտնի էին այս կամ այն ժողովրդի, նրա որևէ ներկայացուցչի սխրագործությունները: Այդպես են ստեղծվել ասքերը, առասպելները, ժողովրդական բանահյուսության մյուս նմուշները: Ընդհանուր առմամբ՝ հայրենիքի գաղափարը ծնունդ է առել անհիշելի ժամանակներում և տարբեր ժողովուրդների մոտ ունեցել տարաբնույթ ընկալումներ ու դրսևորումներ: Հայ ժողովրդի ազգային մտածողության բնութագրական դրսևորումը հանդես է գալիս «Սասունցի Դավիթ» էպոսում, որից կարելի է լիարժեք պատկերացում կազմել հայ ժողովրդի, նրա պատմության և հայրենիքի հանդեպ հայ մարդու սիրո ու նվիրվածության մասին:

Տարբեր երկրների կրթական համակարգերում հայրենասիրական դաստիարակության ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք, բովանդակային էական տարբերություններ և իրավական տարբեր մակարդակներ ունենալով, միաժամանակ ունեն մի շարք ընդհանուր դրույթներ, որոնք կիրառելի են գրեթե բոլոր երկրների համար:

Հանրակրթության ոլորտում հայրենասիրական դաստիարակության կարևորությունից և աշխարհաքաղաքական նոր զարգացումներից ելնելով՝ պետության կողմից կատարվել են որոշ քայլեր: Մինչդեռ, անկախ դեպքերի զարգացումից, հասարակության մեջ հայրենասիրական դաստիարակությունը պիտի գերխնդիր դիտարկվի:

2008 թվականից հանրակրթության ոլորտում լուրջ փոփոխությունների հիմքեր դրվեցին: Մասնավորապես՝ հիմնվեցին ավագ դպրոցներ, ինչն ինքնին լուրջ մարտահրավեր դարձավ ուսումնական գործընթացում ընդգրկված սովորողների, ուսուցիչների և ծնողների համար:

Հայրենասիրական դաստիարակության խնդիրը զերծ է քաղաքական, կուսակցական խնդիրների հետ ուղղակի առնչություններից և ունի հիմնականում

ազգապահպան առաքելություն: Հետևաբար պետության համար «Հայրենասիրական դաստիարակության 2014-2019 թթ. պետական ծրագրի» նախագծում դաստիարակության ոլորտը դիտվում է որպես գերակա բնագավառ:

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը» բովանդակային առումով ներառում է նաև մեր ուսումնասիրության առարկան, խնդիրները, մասնավորապես՝ «Կրթության զարգացման գլխավոր նպատակն է ապագային միտված կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը.

1) լիարժեք ծառայում է ազգային շահերին,

2) արտահայտում է կրթության համապատասխանությունը տնտեսության և հասարակության զարգացման ապագա ակնկալիքներին»[1]:

Նույն տեղում կարող ենք հանդիպել նաև հետևյալ մտքին. «Կրթության բոլոր մակարդակներում ամրապնդել դաստիարակության բաղադրիչը: Պետականության դերի գիտակցման, ***հայրենասիրական, քաղաքացիական*** և էկոլոգիական ուսուցման և դաստիարակության միջոցներով բոլոր սովորողներին զինել հասարակության կայուն զարգացմանը նպաստող գիտելիքներով և կարողություններով»[2]:

Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչությունից, իսկ վերջինս օրինապահ, ազգապահպան, հայրենապաշտպան քաղաքացու դաստիարակության կարևորագույն միջոցներից է: Այդ տեսանկյունից առանձնապես կարևորվում են հասարակագիտական առարկաները:

Կրթության բնագավառում պետության վարած քաղաքականությունը բազմա-կողմանիորեն առնչվում է անձի՝ որպես հայրենասեր անհատի ձևավորմանը: Եվ երբ խոսում ենք ավագ դպրոցում հայրենասիրական դաստիարակության մասին, անշուշտ, նկատի ունենք այն ամենը, ինչն անմիջական կապ ունի հայրենապահպանության և հայ ազգի՝ որպես առանձին էթնոսի յուրահատկության հետ: Ուսումնասիրությունները փաստում են, որ դեռահասների և հատկապես 10-12-րդ դասարանների սովորողների շրջանում առավել մեծ հետաքրքրություն են առաջացնում հայրենիքի մասին

[1] «Կրթություն» շաբաթաթերթ, 15.11.2017թ., չորեքշաբթի, թիվ (46 811), 16 էջ
[2] Նույն տեղում:

պատմական տեղեկությունները:

Աշխարհաքաղաքական վերջին իրադարձությունները, տարածաշրջանի ռազմաքաղաքական իրավիճակն իրենց ազդեցությունն են թողնում ոչ միայն հայրենասիրության ընկալման, այլև նրա դրսևորման անհրաժեշտության վրա: Համընդհանրացման պայմաններում կտրուկ ավելանում է ժխտողական վերաբերմունքն ազգային արժեքների, ավանդույթների պահպանման նկատմամբ: Արդի շրջանում բոլորը շեշտում են հայրենասիրական և ռազմահայրենասիրական դաստիարակության խնդրի կարևորությունը, սակայն հայրենիքի նկատմամբ ունեցած սիրո դրսևորման իրական ընկալումը դեռևս համակարգված բնույթ չունի: Հայրենասիրական դաստիարակությունն այսօր անվիճելիորեն կարող ենք դիտարկել իբրև սոցիալական պահանջ, պետության անկախության պահպանման և տնտեսական զարգացման երաշխիք, որի անմիջական պատասխանատուն հանրակրթության համակարգն է՝ դպրոցը: Ավագ դպրոցում հայրենիքի և հայրենասիրության էության վերաբերյալ պատկերացումներ ձևավորելու, ինչպես նաև սովորողների հայրենասիրական դաստիարակության գործառույթը տրված է հիմնականում հասարակագիտական առարկաներին:

Հայրենասիրական դաստիարակության խնդիրներին ժամանակին անդրադարձել են Յու. Բաբանսկին, Բ. Լիխաչևը, Վ. Ստոլետովը, Յու. Ամիրջանյանը, Վ. Սուխոմլինսկին, Ս. Խաչատրյանը, Ս. Պետրոսյանը, Գ. Շչուկինան, Ս. Մանուկյանը, Ս. Գևորգյանը, Հ. Անդրեասյանը, Ռ. Համբարձումյանը, Վ. Աթոյանը, Ս. Զաքարյանը, Ա. Սարգսյանը և ուրիշներ, վերջին շրջանում՝ Մ. Դավթյանը, Ս. Հակոբյանը, Գ. Ղույումչյանը, Ս. Ա. Սահակյանը, Ա. Խարիբովան, Ի. Բաբուրովան, Օ. Կոզիրևան, Ե. Ալեքսանդրովնան, Վ. Լեվչենկոն, Տ. Էլդարովիչը և ուրիշներ: Մինչդեռ նշված մասնագետներից ոչ մեկը չի անդրադարձել ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության հիմնախնդրին՝ այն կապելով հասարակագիտական առարկաների դասավանդման հետ: Սրանով էլ պայմանավորվում է թեմայի արդիականությունը: Այսօր ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև ամբողջ հայության գերակա խնդիրը հայկական պետականության պահպանումն է, ինչը ստիպում է ուժեղացնել հայրենասիրական

դաստիարակությունը: Խնդիրը ոչ միայն արդիական է, այլև հրատապ, ինչի արդյունքում Արցախի Հանրապետությունում կառավարության կառուցվածքի մասին 2020 թվականի մայիսի 26-ի ՆՀ-3-Ն նախագահի որոշմամբ՝ նախարարություններից մեկը վերանվանվել է «Ռազմահայրենասիրության, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության նախարարություն»:

Թեմայի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ավագ դպրոցը արդի իրականության մեջ նոր իրողություն և կառույց է, որտեղ աշակերտների համակազմը տարբեր է, և սովորողներն ունեն գիտելիքների, պատկերացումների, դաստիարակվածության տարբեր մակարդակներ:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության դրվածքը և մշակել այն արդյունավետ իրականացնելու պայմաններ, տալ դրանց կիրառման տեսական և գործնական հիմնավորումը:

Հետազոտության օբյեկտը: Սովորողների հայրենասիրական դաստիարակության գործընթացն է ավագ դպրոցում:

Հետազոտության առարկան Սովորողների հայրենասիրական դաստիարակության սկզբունքները, բովանդակությունը, մեթոդները և ձևերն են:

Հետազոտության գիտական վարկածը: Սովորողների հայրենասիրական դաստիարակությունը ավագ դպրոցում կլինի արդյունավետ, եթե.

- սովորողներն ունենան լիարժեք պատկերացում հայրենասերի կատարելատիպի մասին,
- լիարժեք օգտագործվի հասարակագիտական առարկաների ներուժը,
- հայրենասիրական դաստիարակությունը կրի համալիր բնույթ,
- սովորողների մոտ ձևավորվի հայրենասիրության դրսևորման մոտիվացիա:

Հետազոտության խնդիրները:

1. Ուսումնասիրել հայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրները:

2.Բացահայտել հայրենասիրության վերաբերյալ ավագ դպրոցականների պատկերացումները:

3.Ընդլայնել «հայրենասեր» հասկացության ընկալման սահմանները և մշակել հայրենասերի կատարելատիպը:

4.Ուսումնասիրել հասարակագիտական առարկաների միջոցով ավագ դպրոցում սովորողների հայրենասիրական դաստիարակության գործընթացը:

5.Մշակել ավագ դպրոցում հայրենասիրական դաստիարակության արդյունավետության բովանդակային և գործընթացային նոր մոտեցումներ:

Հետազոտության մեթոդները: Առաջադրված խնդիրները լուծելու համար կիրառվել են հետևյալ մեթոդները:

Տեսական.

- հետազոտության հիմնախնդրի վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանա-մանկավարժական, մասնագիտամեթոդական գրականության ուսումնասիրություն

Էմպիրիկ.

- սոցոլիոգիական հարցում
- մանկավարժական մշտադիտարկում
- փորձարարական ուսուցում

Վիճակագրական.

- մաթեմատիկական-վիճակագրական վերլուծություն:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Ընդլայնվել են «հայրենասեր» հասկացության ընկալման սահմանները, մշակվել է հայրենասերի կատարելատիպը:

Հայրենասերի կատարելատիպը (իդեալը) ենթադրում է հետևյալը, որ նա ցուցաբերում է սոցիալական, քաղաքացիական, հասարակական կարգապահություն և պատասխանատվություն, հոգատար է բնության, շրջապատի, ծննդավայրի և հայրենի երկրի, նրա պատմամշակութային ժառանգության նկատմամբ, ունի քննադատական և վերլուծական մտածողություն, անհանդուրժող է բացասական երևույթների նկատմամբ՝ դրսևորելով դրանց դեմ պայքարելու պատրաստակամություն:

2.Ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության կատարելագործման նպատակով մշակվել և որպես նորույթ ներդրվել է «Հայրենագիտական դասընթաց»-ը, ինչն ապահովել է դրական արդյունք:

Հետազոտության տեսական նշանակությունը պայմանավորված է հայրենասերի կերպարի նորովի մեկնաբանմամբ, սովորողների հայրենասիրական

դաստիարակության գործընթացի արդյունավետության բարձրացմանը՝ միտված դասընթացի գիտատեսական հիմնավորմամբ:

Հետազոտության գործնական նշանակությունը. ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակությունը արդյունավետ կազմակերպելու նպատակով մշակված «Հայրենագիտական դասընթաց»-ը, դասավանդման և գնահատման ձևերը և մեթոդները օգտակար կլինեն ավագ դպրոցի համապատասխան մասնագետների համար, կարող են օգտագործվել մանկավարժներ պատրաստող և վերապատրաստող հաստատություններում՝ որպես որոշ դասընթացների բաղադրիչներ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են.

1. Հանրակրթական ուսումնական հաստատության ավագ դպրոցականների և ուսուցիչների պատկերացումների խորացումը դպրոցի կարևորագույն խնդիրներից է:
2. Հայրենասիրական դաստիարակության արդյունավետության կարևոր պայմաններից մեկը «հայրենասեր» հասկացության համարժեք ընկալումը և իմաստավորումն է:
3. Հայրենագիտական գիտելիքների խորացումը, հայրենաճանաչումը հայրենասիրական համոզմունքների հիմքն են:
4. Ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության արդյունավետ իրականացումը պայմանավորված է հասարակագիտական առարկաների բովանդակության խորացմամբ, դասավանդման ձևերի համալիր կիրառմամբ:

Հետազոտության բազա: Հետազոտության համար բազա են հանդիսացել Վանաձոր համայնքի թիվ 4, 25, 27 հիմնական, թիվ 5, 10, 13 ավագ, Տավուշի մարզի սահմանամերձ Ն. Ծաղկավանի միջնակարգ դպրոցները և ՎՊՀ հենակետային վարժարանը:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, 111 սկզբնաղբյուր պարունակող գրականության ցանկից, ներառում է 3 աղյուսակ, 24 տրամագիր, 3 հավելված, 2 նկար: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 209 էջ (ներառյալ հավելվածները):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը, օբյեկտը և առարկան, գիտական վարկածը, խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության բազան, փորձաքննությունն ու ներդնումը, ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «**Հայրենասիրական դաստիարակության գիտատեսական հիմքերը»** բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում,որ վերնագրված է **«Հայրենասիրական դաստիարակության էությունը և բովանդակությունը»** անդրադարձել ենք «հայրենասեր» և «հայրենասիրություն» հասկացությունների էությանն ու բովանդակությանը: Հենվելով տարբեր աղբյուրների և սեփական պատկերացումների վրա մշակել ենք հայրենասերի կատարելատիպը:

Այսինքն՝ լիարժեք հայրենասերը նա է, ով.

- արձագանքում է շրջապատում առկա սոցիալական խնդիրների լուծմանը,
- բարեխղճորեն կատարում է իր պարտականությունները,
- հոգատար վերաբերմունք է ցուցաբերում բնության և շրջապատի նկատմամբ,
- պատրաստ է անգամ կյանքի գնով պահպանելու ու պաշտպանելու ծննդավայրն ու հայրենիքը
- պահպանում է պատմամշակութային ժառանգությունն ու ազգային ավանդույթները
- պետության շահերը գերադասում է անձնական շահից
- սիրում է իր ծննդավայրն ու հայրենի երկիրը իբրև նախնիներից թողնված ժառանգություն
- վարում է ակտիվ հասարակական կյանք,
- ցուցաբերում է հասարակական կարգապահություն
- ունի ձևավորված համոզմունքներ հայրենիքի վերաբերյալ
- ունի ձևավորված քաղաքացիական պատասխանատվություն
- քննադատաբար է ընդունում և արձագանքում նեգատիվ երևույթներին, ձգտում է վերացնել դրանք, պայքարում է դրանց դեմ

- օժտված է հայրենասիրական գիտակցությամբ, որը ներառում է տեղեկատվություն թե իր ծննդավայրի և թե հայրենիքի մասին, սկզբունքային և պատասխանատու անձնավորություն է:

Ելնելով սովորողների հայրենասիրական դաստիարակության էության և բովանդակության վերաբերյալ մեր ուսումնասիրություններից եզրակացրել ենք, որ ժամանակն է նորովի ընդունելու հայրենասիրության էությունը ոչ միայն գաղափարական, այլ նաև գործնական հարթության վրա:

«Հայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում» խորագրով երկրորդ ենթագլխում անդրադարձել ենք հայրենասիրական դաստիարակության համալիր մոտեցումանը, որը ենթադրում է խնդրի լուծման այնպիսի մոդել, որտեղ կարևորվել են միասնական պահանջների և սովորողների դաստիարակչական գործընթացի տրամաբանական շարունակա-կանությունը:

«Հասարակագիտական առարկաների հայեցակարգերը՝ որպես հայրենասիրական դաստիարակության տեսական հիմքերից մեկը» երրորդ ենթագլխում վերլուծվել են հասարակագիտական առարկաների հայեցակարգերը՝ խնդրո հարցերի լույսի ներքո: Կարևորվել և առանձնացվել են հասարակագիտական առարկաների այն թեմաները, որոնց արդյունավետ ուսումնասիրումը կնպաստի սովորողների՝ որպես հայրենասեր քաղաքացու ձևավորմանը: Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների հայրենասիրական դաստիարակության համար հիմք են ծառայում առարկայական չափորոշիչները, որոնք ներառում են տեսական գիտելիքների պահանջի նվազագույն և առավելագույն քանակը, նաև կարևորում մեթոդական բազմազանությունը, ուսումնական ծրագրերն ու գնահատման մեխանիզմներն ու չափանիշները: Առարկայական հայեցակարգերը իրենց մեջ ներառում են կոնկրետ առարկայի կարևորագույն և պետական պատվերի իրականացման հիմնական սկզբունքներն ու բովանդակային խնդիրները: Օրինակ՝ «Պատմություն» առարկայի հայեցակարգում հանդիպում է հետևյալ միտքը. «Ավագ դպրոցում, ընդհանուր և տարբերակված ուսուցման հոսքերում Հայոց պատմության դասավանդումն այնպես պետք է կազմակերպվի, որպեսզի սովորողները հիմնարար և

կայուն գիտելիքներ ձեռք բերեն Հայաստան երկրի ու պետության անցած փառավոր ուղու, հայկական քաղաքակրթության ստեղծած արժեքների մասին, գիտական պատկերացում ունենան Հայոց պատմության հիմնախնդիրների վերաբերյալ»:

Ուսումնասիրվել են հասարակագիտական առարկաների հայեցակարգերը, որտեղ ամփոփված են տեսական գիտելիքների համար անհրաժեշտ այնպիսի կարևոր սկզբունքներ, նպատակներ և խնդիրներ, որոնք միասին որևէ տեղ, ոչ մի կերպ միասնական փաստաթղթի ձևով արտացոլված չեն: Հայրենաճանաչության, համամարդկային արժեքների իմացությունն ու դրա իմաստավորման, փիլիսոփայության, գեղագիտության, ինչպես նաև բարոյագիտության վերաբերյալ բազային գիտելիքներն, անշուշտ, հայրենասիրության տեսական գիտելիքների հիմք են կազմում:

Ատենախոսության երկրորդ գլուխը **«Հասարակագիտական առարկաների ուսուցման արդյունավետ կազմակերպումը՝ որպես ավագ դպրոցականների հայրենասիրության ձևավորման և դրսևորման հիմք»** բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին ենթագլուխում՝ **«Հասարակագիտական առարկաների հնարավորությունները ավագ դպրոցականների հայրենասիրության ձևավորման գործում»** անդրադարձել ենք հասարակագիտական առարկաների բովանդակային հնարավորություններին և ուսուցման արդյունավետ պայմանների կազմակերպմանը: Հասարակագիտական առարկաների բովանդակային նյութը շատ ավելի հեշտ է յուրացվում սովորողների կողմից, քանի որ ավագ դպրոցականների մոտ աստիճանաբար մեծանում է գիտելիքների շրջանակը: Իրենց դրսևորումների մեջ ավագ դպրոցականներն հենվում են այնպիսի դրդապատճառների վրա, որոնք նպաստում են հասարակության մեջ իրենց տեղը հաստատելուն: Այդ իսկ պատճառով սովորողների գիտակցության վրա ազդող հասարակագիտական առարկաների բովանդակային նյութը հնարավորինս արդյունավետ և բազմակողմանի ուսուցանումից բացի կարևորել ենք օրինակելի վարքի դրսևորման անհրաժեշտությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուսուցիչները ավելի մեծ բարոյական պահանջներ են առաջադրում հայրենասեր մարդու կերպարին: Անհրաժեշտ ենք համարել, որ

սովորողների համար այդ ամենը լինի առավել քան մատչելի, իսկ դրանց դրսևորումները՝ առավել հասանելի՝ տարիքային առանձնահատկություններից ելնելով:

«Հասարակագիտական առարկաների ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպումը՝ որպես ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության միջոց» վերնագրով երկրորդ ենթագլխում ներկայացվել են հասարակագիտական առարկաների ուսուցման ձևերի ու մեթոդների բազմազանությունը: Առանձնացվել են սովորողների հայրենասիրական դաստիարակության իրականացման, հասարակագիտական առարկաների ուսուցման գործընթացում դաստիարակչական աշխատանքների ձևերի և մեթոդների բազմազանության ապահովումը և դրանց ճիշտ ընտրությանը, ինչն անմիջականորեն կախված են բազմապիսի գործոններից, ինչպիսիք են դաստիարակության նպատակը, բովանդակությունը, սովորողների տարիքը, հետաքրքրությունների դաշտը:

Երրորդ ենթագլխը, որը վերնագրված է՝ **«Միջառարկայական կապերի ապահովումը որպես հայրենասիրական դաստիարակության կատարելագործման պայման»** քննարկել ենք միջառարկայակայն կապի ապահովման խնդիրը: Այդ կապերը լավագույնս նպաստում են ինչպես սովորողների կողմից գիտական գիտելիքների ձեռքբերմանը, այնպես էլ գործնական աշխատանքների բազմաբովանդակությանը:

Եկել ենք այն համոզման, որ հասարակագիտական առարկաների միջև կապը, պիտի՝

1. նպաստի սովորողների մտահորիզոնի ընդլայնմանը,
2. ստեղծի համապատասխան հնարավորություններ ձեռք բերված գիտելիքները գործնականում օգտագործելու համար,
3. ձևավորի հատուկ մոտեցում հայրենասիրության և հայրենասիրական դրսևորումների վերաբերյալ,
4. ապահովի տերմինների և հասկացությունների ճշգրիտ մեկնաբանումը և դրանց ընկալումը,
5. նպաստի սովորողների հետաքրքրությունների ընդլայնմանը,
6. օժանդակի սովորողների հետազոտական աշխատանքների կազմակերպմանը:

Սովորողների հայրենասիրական դաստիարակության կազմակերպման գործընթացում միջառարկայական կապի ճիշտ և նպատակային իրականացումը հասարակագիտական առարկաների ուսուցիչների համար հնարավորություն է ստեղծում՝ կատարելագործելու սովորողների հայրենասիրական դաստիարակության գործընթացը, ապահովում սովորողների դաստիարակչական աշխատանքների կազմակերպման կատարելագործման ժամանակակից պահանջներին համապատասխան պայմանները: Դրա արդյունավետության մեջ համոզվել ենք ելնելով ինչպես սեփական, այնպես էլ գործընկերների փորձից: ՀՀ ԿԳՆ Վանաձորի Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցում անց են կացվել մի շարք համակցված դասեր՝ օրինակ հայ գրականություն, հայոց պատմություն և անգլերեն առարկաներից՝ նվիրված Թումանյանի կյանքին և ստեղծագործությանը, հայ գրականության, հայոց պատմություն և աշխարհագրության առարկաներից նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության հռչակմանը, 12-րդ դասարանում գրականություն առարկայի Գուրգեն Մահարի «Ծաղկած փշալարեր» վիպակի և Հայ ժողովրդի պատմություն՝ Հայաստանի քաղաքական կյանքը 1930-ական թվականներին թեմաները և այլն:

Երրորդ գլուխը՝ «Ավագ դպրոցականների հայրենասիրության ձևավորման և դրսևորման գործընթացի վերաբերյալ սոցիոլոգիական հարցումների վերլուծություն և ամփոփում» բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին՝ «**Հայրենագիտական դասընթացի մշակումն ու հիմնավորումը**» ենթագլուխուխը նվիրված է հետազոտական աշխատանքներին և «Հայրենագիտական դասընթաց»-ի մշակմանը: 2015-2016 ուսումնական տարում փորձ է արվել պարզելու 70 ուսուցիչների և 200 աշակերտների պատկերացումները հայրենասիրության մասին: Արդյունքները գոհացուցիչ չէին:

Ելնելով ստացված պատկերից անհրաժեշտ համարեցինք ընդլայնել սովորողների պակերացումները հայրենիքի և հայրենասերի մասին, ինչն իրականացնելու համար մշակեցինք հայրենասերի կատարելատիպը և « Հայրենագիտական դասընթաց»-ը:

Սահմանվել են «Հայրենագիտական դասընթաց»ի նպատակը, խնդիրներնը, սկզբունքներնը, կիրառվող մեթոդները, գնահատման համակարգը, ինչպես նաև բովանդակությունը: Այն ներառում է 10 դաս՝

- Հայաստանի պետական խորհրդանիշներ
- Հայրենիք և հայրենասիրություն
- Հայ ժողովրդի հերոսները և հաղթական ճակատամարտերը
- Հայ ժողովրդի ձեռքբերումները պատմական տարբեր ժամանակներում
- Հայաստանի ազգային հերոսներ
- Անվանի հայորդիներ (նոր և նորագույն շրջան)
- Պատասխանատվություն, պարտաճանաչություն, հասարակական հանրօգուտ աշխատանք
- Հայրենասիրական դաստիարակությունը՝ որպես սովորողների մասնագիտական կողմնորոշման և պետության զարգացման հիմք
- Ճանաչողական էքսկուրսիա
- Ես հայրենասեր եմ

«Հայրենագիտական դասընթացի փորձարարության արդյունքների վերլուծություն» վերնագրով երկրորդ ենթագլուխում, ներկայացված են փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծությունը: Փորձարարական աշխատանքները կատարվել են Վանաձորի Ս. Նալչռանյանի անվան թիվ 13 ավագ դպրոցում 2017-2018 ուստարում: Արդեն 1-2 պարապմունք հետո սովորողների մոտ նկատվեց ձգտում ավելի խորացնելու իրենց գիտելիքները, մեծացավ նրանց հետաքրքրվածությունը վերլուծական և հետազոտական աշխատանքներ կատարելու ցանկությունը և մոտիվացիան: Դասընթացի ավարտից հետո նախնական փուլում օգտագործված հարցաթերթիկները նույնությամբ տրվել են ստուգողական և փորձարարական խմբի սովորողներին: Փորձարարական խմբի արդյունքն էապես բարձր էր ստուգողական խմբերի արդյունքներից: Ի տարբերություն ստուգողական խմբերի փորձարարական խմբի սովորողների 75 տոկոսը տվել էր ճիշտ պատասխան:

Դասընթացի ուսուցման ժամանակ նկատվեց, որ բարձրացել է սովորողների ակտիվությունը, ինչը դրսևորվեց ինչպես ուսումնական այնպես էլ հասարակական աշխատանքներում, այն արձանագրվեց նաև ստուգողական շաբաթօրյակի ընթացքում: Նախնական փուլում հայտարարվել էր շաբաթօրյակ, որին մասնակցեցին սովորողների ընդամենը 20 տոկոսը՝ 30 աշակերտ: Նախնական փուլում շաբաթօրյակին մասնակցել

են ստուգողական և փորձարարական խմբերից մոտավորապես նույն քանակով սովորողներ: Իսկ դասընթացի ավարտից հետո հայտարարված շաբաթօրյակի ժամանակ պատկերը էապես տարբերվում էր: Եթե ստուգողական խմբում պատկերը գրեթե նույնն էր, ապա փորձարարական խմբում սովորողների ընդգրկվածությունը շաբաթօրյակին կազմում էր 90 տոկոս(տե՛ս տրամագիր 1): *Տրամագիր 1*



Դասընթացն ավագ դպրոցականների մոտ խորացնում է ազգային ինքնագիտակցությունը, որը հենվում է ազգային արժեքների, պետական խորհրդանիշների, ազգային հերոսների, հաղթական ճակատամարտերի մասին ընդլայնված գիտելիքների վրա:

Եզրակացություն: Ամփոփելով վերոգրյալը հանգեցինք հետևյալին՝

1. Հաստատվեց գիտական վարկածի ճշմարտացիությունը, այսինքն՝

- աշակերտներն ունեցան լիարժեք պատկերացում հայրենասերի կատարելատիպի մասին,
- լիովին օգտագործվեց հասարակագիտական առարկաների ներուժը,
- հայրենագիտական դասընթացում կիրառվեցին բազմազան ձևեր և մեթոդներ,
- հայրենասիրական դաստիարակությունը կրեց համալիր բնույթ,
- սովորողների մոտ ձևավորվեց համապատասխան մոտիվացիա:

2. Հայրենասիրական գիտակցության ձևավորումը արդյունավետ էր, քանի որ մշակվեց և սովորողներին ներկայացվեց հայրենասերի կատարելատիպը:

3. Ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության հիմքը հասարակագիտական առարկաներն են, քանի որ նրանց միջոցով են հիմնականում ձևավորվում հայրենասիրական համոզմունքները:
4. Հայրենասեր դառնալու համար անհրաժեշտ է լավ ճանաչել հայրենիքը: Դրան էապես նպաստել է փորձարարական խմբում ներդրված «Հայրենագիտական դասընթաց»-ը:
5. Ավագ դպրոցականները, որոնք մասնակցել են «Հայրենագիտական դասընթաց»-ին, տարբերվում են իրենց վարքագծային դրսևորումներով, պատրաստակամության և պատասխանատվության ընկալմամբ, մեծ ուշադրություն են դարձնում անձնական որակներին, հասարակական հանրօգուտ աշխատանքներին, արձագանքում են շրջապատում առկա բացասական երևույթներին, օրինակ են ծառայում իրենցից կրտսերների համար: Հետաքրքրված են ազգային արժեքներով, ցանկություն ունեն նմանվելու և գերազանցելու անվանի հայորդիներին, տարբերակում են ազգային և պետական խորհրդանիշները, առանձնակի հարգանքով են վերաբերվում դրանց:
6. Ստացված դրական արդյունքները պայմանավորվեցին ուսուցման և դաստիարակության բազմազան ձևերի և մեթոդների կիրառմամբ և հայրենասիրական դաստիարակության նկատմամբ համալիր մոտեցմամբ:
7. Մեր դիտարկումները բացահայտեցին, որ դասընթացի ավարտին փորձարարական դասարանի սովորողները դրսևորում են վարքագծային փոփոխություններ (օրիներգը հնչելու ժամանակ այդ աշակերտները կանգնում են, ներկայացնում առաջարկություններ այս կամ այն հարցը լուծելու առնչությամբ, օրինակ՝ պարբերաբար թարմացնել գունաթափ դրոշները, քննադատում են այն տղաներին, ովքեր փորձում են ճնշել թույլերին), ինչը վկայում էր ձևավորված հայրենասիրական համոզմունքների մասին:
8. Հաջողության գրավականը գնահատման անհրաժեշտ համակարգի ներդրումն էր, ինչն իրականացվեց դասընթացի ժամանակ: Դասընթացի յուրացման ընթացքում գրանցվեց ցուցանիշների աճ: Դասընթացը սկսելուց առաջ, ըստ ներդրված գնահատման սանդղակի, ցուցանիշները բավարար էին (21-50), իսկ վերջում՝ շատ լավ (71-90):

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Էմինյան Գ., «Ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության մի քանի առանձնահատկություններ» Մխիթար Գոշ 2016 2 /45/, 205-208 էջ:

2. Էմինյան Գ., Գևորգյան Պ., «Հայրենասիրության էության հարցի շուրջ» Մանկավարժական միտք 2017 1-2, 101-105 էջ :

3. Էմինյան Գ., «Ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության արդյունքների գնահատման մի քանի առանձնահատկություններ» Մանկավարժական միտք 2017 3-4, 193-200 էջ:

4. Էմինյան Գ., Յոլչյան Դ., «Գյուղական և քաղաքային դպրոցների սովորողների ուսուցման և դաստիարակության կազմակերպման մի քանի առանձնահատկություններ» Ակունք գիտական հոդվածների ժողովածու, 2017 Թիվ 2/16/, 211-215 էջ:

5. Էմինյան Գ., «Սովորողների հայրենասիրական դաստիարակության մանկավարժական պայմանները» Վանաձորի պետական համալսարանի, գիտական տեղեկագիր Պրակ Ա 2017, 305-311 էջ:

6. Էմինյան Գ., «Հասարակագիտական առարկաների դասավանդման կատարելագործումը որպես ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության պայման» Մխիթար Գոշ 2017 /2, 212-216 էջ:

7. Էմինյան Գ., Մեհրաբյան Մ., «Patriotic Upbringing as an Integral Part of the Learners' Education» Մանկավարժական միտք 2018, 59-63 էջ:

8. Էմինյան Գ., «Հայրենասիրական դաստիարակությունը որպես սովորողների մասնագիտական կողմնորոշման և պետության զարգացման հիմք» ՇՊՀ Գիտական տեղեկագիր, 2 0 1 9 № 2 Պրակ Բ, Հանրապետական գիտաժողով 85, 357-367 էջ:

9. Էմինյան Գ., «Ավագ դպրոցականների հայրենասիրական դաստիարակության գործընթացացում մինի դասընթացի ներդրումը որպես արդյունավետության պայման» Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Ա 2020, 246-252 էջ:

ГАГИК КАРЛЕНОВИЧ ЭМИНЯН

ОБЩЕСТВОВЕДЧЕСКИЕ ПРЕДМЕТЫ КАК ОСНОВА ПАТРИОТИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ СТАРШЕКЛАССНИКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 - “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 16-го декабря 2021 г. в 12 ^{00} на заседании специализированного совета 020 "Педагогика" ВАК РА при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Со времён зарождения человечества человек разумный искал способы воспроизведения выученного, обогащения полученных знаний и передачи их следующим поколениям. До появления первых государственных объединений истории уже были известны геройства того или иного народа или какого-либо его представителя. Так были созданы сказания, легенды и другие образцы народного фольклора.

Патриотизм начинается с познания родины и является важным средством воспитания законопослушного гражданина, который сохранит национальную идентичность и защитит родину. С этой точки зрения особо важны обществоведческие предметы.

Последние геополитические события , военно-политическая ситуация региона влияют не только на восприятие патриотизма, но и на необходимость его проявления. В условиях глобализации резко возрастает отрицательное отношение к сохранению народных ценностей, традиций. В данный период все отмечают важность проблемы патриотического и, вчастности, военно – патриотического воспитания. Сегодня патриотическое воспитание, бесспорно, можем рассматривать как социальное требование, гарантию свободы государства и экономического развития, ответственность за которую непосредственно несёт общеобразовательная школа. В

старшей школе формирование представлений о родине и сущности патриотизма базируется на обществоведческих предметах.

Цель исследования: изучить постановку патриотического воспитания учеников старшей школы и разработать условия продуктивной организации процесса, дать теоретическое и практическое обоснования их применения.

Задачи исследования:

1. Изучить проблемы патриотического воспитания.
2. Выявить представления старшеклассников о патриотизме .
3. Расширить границы восприятия понятия « патриот » и разработать идеал образа патриота.
4. Изучить процесс патриотического воспитания старшеклассников постредством обществоведческих предметов.
5. Разработать новые содержательные и процессуальные подходы продуктивности патриотического воспитания в старшей школе.

Научная новизна исследования:

1. Расширены границы восприятия понятия «патриот», разработан идеал образа патриота.

Идеал патриота предполагает , что человек проявляет:

социальную, гражданскую, общественную дисциплину и ответственность, бережно относится к природе, социальному окружению, родному краю, к его историко-культурному наследию, имеет критико-аналитическое мышление, проявляет нетерпимость к отрицательным проявлениям и готов вести борьбу против них.

2. В целях усовершенствования патриотического воспитания старшеклассников был разработан и как новшество внедрён «Курс родиноведения», который дал положительный результат.

Теоретическая значимость исследования__обусловлена новым толкованием образа патриота, научно-теоретическим обоснованием разработанного курса, направленного на повышение продуктивности процесса патриотического воспитания старшеклассников, а также сделанными умозаключениями.

Практическая значимость исследования. Разработанный с целью продуктивного патриотического воспитания старшеклассников «Курс родиноведения», формы и методы преподавания и оценивания будут полезны как преподавателям соответствующих предметов и классрукам в старшей школе, а также учереждениям готовящим педагогические кадры и занимающимися их переподготовкой, где данный курс может быть включен в состав соответствующих дисциплин.

Структура и объем исследования. Диссертация состоит из введения, трех глав, заключения, библиографии и четырех приложений. Она содержит 3 таблицы, 24 диаграммы, 2 рисунка.Общий объем работы составляет 209 компьютерных страниц(включая приложения). Основные результаты исследования опубликованы в 9 научных статьях.

GAGIK K. EMINYAN

SOCIAL SCIENCE SUBJECTS AS A BASE FOR HIGH SCHOOL LEARNERS' PATRIOTIC EDUCATION

The abstract o the dissertation for the degree of Candidate of Pedagogical Sciences in specialty 13.00.01 - "Teaching and History of Pedogogy".

The defense of the dissertation will be held on December 16, 2021 at 12 ^{00} at the session of the Special Board 020 "Pedagogy" SCC RA (Supreme Certifying Committee) at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

Address: RA, 0010, Yerevan, Tigran Mets Ave. 17

SUMMARY

The relevance of the research: From the very beginning of humanity an intelligent man has been looking for means to reproduce, to enrich the gained knowledge, and to pass it on to new generations. Before the formation of the first state structures, heroism of different nations or any of its representatives was known to history. This was the way of forming stories, legends, and other examples of folklore.

Patriotism starts with an acknowledgment of the homeland, which is one of the most important means of educating a law-abiding citizen, maintaining national unity, and

protecting his homeland. From this point of view, social science subjects should be emphasized.

The latest geopolitical events and the military-political situation in the region have an influence not only on the perception of patriotism, but also on its manifestation. During globalization, a negative attitude is sharply increasing towards keeping national values and traditions. Nowadays, everyone has emphasized the problem of patriotic education, particularly military-patriotic education. Today, patriotic education can be undoubtedly considered as a social demand, a guarantee of preserving the independence of the country, and a guarantee of economic development. Public education — the school itself, is directly responsible for all that. In high schools, the formation of perceptions of the homeland and the essence of patriotism are based on social science subjects.

The aim of the research is to study the state of high school learners' patriotic education and to work out productive conditions for their theoretical and practical manifestations.

The objectives addressed in the research:

1. To study the issues of patriotic education,
2. To reveal high school learners' perceptions of patriotism,
3. To enlarge the borders of the concept of 'patriotism' and work out a type of ideal patriot,
4. To study the process of patriotic education by means of social science subjects,
5. To work out new approaches to the content and process of productive patriotic education in high schools.

The scientific novelty of the research:

1. The perception of the concept of 'patriotism' has been enlarged, and the type of ideal patriot has been worked out.

The ideal of a patriot assumes that a person shows civil, social discipline and responsibility, takes care of nature, the social environment, and the native land, its historical and cultural heritage, has critical and analytical thinking, shows intolerance to negative manifestations and is ready to fight against them.

2. To improve high school learners' patriotic education, a course of "Area studies" has been worked out and inserted, which has had a positive result.

The theoretical value of the research is conditioned by a new explanation of a patriot, by scientific-theoretical support of the course to increase the productivity of learners' patriotic education, and by the conclusions.

The practical value of the research: to organize high school learners' patriotic education in a productive way, a course of "Area studies", ways and methods of teaching and assessment have been worked out. They can be useful both for teachers of relevant subjects and class teachers in a high school, as well as for educational institutions preparing and training pedagogues, where this course can be included in the relevant disciplines.

The structure and volume of the research: The dissertation consists of an introduction, three chapters, a conclusion, a bibliography and four appendices. It contains 3 tables, 24 diagrams, 2 pictures. The total volume of the work is 209 computer pages(including appendices). The main results of the study have been published in 9 scientific articles.